ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի /ավտոմեքենայի ձեռքբերում/

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 25.06.2018թ. ժամը 12.00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Հ. Սարոյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը
Ա. Գաբրիելյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Հ. Հակոբովը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 19.06.2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած «Կարկոմավտո» ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 25.06.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից armeps համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ 22.06.2018թ. ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ Կարկոմավտո ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է էլեկտրոնային փոստով /կցվում է/ և համապատասխանում են հրավերի պահանջներին:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/ `1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Կարկոմավտո» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ա. Գաբրիելյան

_____ Հ. Հակոբով

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան